ՄԱՂԹԱՆՔ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ի ՍԱՀՄԱՆՍ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՏՊԱՐԱՆ ԴՊՐԵՎԱՆՈՒՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԱՆԹԻԼԻԱՍ - ԼԻԲԱՆԱՆ
1933

281.6
4-59

ՀՐԱՀԱՆԳ

Կաթողիկոսութեանս թեմական բոլոր Եկեղեցիներու մէջ պէտք է պահուի քանի մը օրինակ այս ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻն:

Իսկ տարուան ընթացքին ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ երբեմն անգամ կը կատարուի Կաթողիկոսութեանս բոլոր թեմական եկեղեցիներուն մէջ.

Ա.— Վեհ. Սահակ Ս. Հայրապետի ամուսնացնին, այսինքն *«ի Տօնի Սրբոյն Խաչակայ Պարթեւի Հայրապետին»*:

Բ.— Ս. Գ. Լուսաւորչի վերապամուտի տօնին, Մեծ Պահոց Ե.րդ եօթնեակին շաբաթ օրը, որ ՈՒԽՏԻ ՕՐՆ է Անթիլիասի Կաթողիկոսարանին:

Գ.— Ապրիլ 26-ի ամենեն մօտիկ կիրակին: — 1931 Ապրիլ 26, տարեդարձ օծման Տ. Բարգէն Ս. Կաթողիկոսին:

281.6
4-59

04 NOV 2009

ՄԱՂԹԱՆՔ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ի ՍԱՀՄԱՆՍ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՏՊԱՐԱՆ ԴՊՐԵՎԱՆՈՒՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԱՆԹԻԼԻԱՍ - ԼԻԲԱՆԱՆ
1933

22 MAY 2013

7914

Այս մաղթանք Հայրապետական կարգեցաւ ի Տ. Բարգէն Կաթողիկոսէ, եւ զառաջինն կատարեցաւ ի տօնախմբութեան Երեսներորդ ամի Կաթողիկոսութեանն Տ. Սահակայ Բ.ի, ի 1933 եւ ի 18 Յունիսի յաւուր Կիւրակիէ, ի տօնի Կաթողիկէ Եկեղեցւոյ Էջմիածնի, յաւուրs Սրբոյ Պատարագի, ի Սրբոց Թարգմանչաց Եկեղեցւոջ Կաթողիկոսարանիս, որ յԱնթիլիաս Լիբանանու:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Արմ ССР
Լ. Ա. Մաշ
Մշակութային Ասոց

63974-67

ՄԱՂԹԱՆՔ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԽՐԱՏ.– Յորժամ կամիցին կատարել *Մաղթանք Հայրապետական*, այս լիցի կանոն: Ամենեքեան եկանեն յատեան Եկեղեցւոյ, իւրաքանչիւր զգեցեալ ըստ իւրում ասիճանի եւ կարգի, խնկովք եւ մոմեղինովք, եւ ամենայն Եկեղեցի ջանաւորեալ:

Հանդիսապետն ասէ *Հայր Մեր*:

ԺԱՄԱՄՈՒՏ

Զխաղաղութիւն շնորհեա Եկեղեցւոյ քում սրբոյ, զխաղաղութիւն և զանշարժութիւն ի թշնամեաց պատերազմէ. և հաստատեա ի մի հաւատ զկաթողիկէ Եկեղեցի. զքեզ խոստովանիմք Տէր և Աստուած, կեցո՛ զմեզ:

Ա.Ղ.Օ.Թ.Ք

Հայր ամենակալ, արարիչ տիեզերաց, եկեալ եմք առաջի քո ի տեղւոջս սրբութեան, մատուցանել քեզ պաղատանս, զի հեղցես ի սիրտս մեր զշնորհս ողորմութեան քո, և լուսաւորեսցես զհոգիս մեր սրբութեամբ, և զօրացուսցես զխորհուրդս մտաց մերոց արդարութեամբ:

Լսո՛ զմեզ, Տէր, ի ժամուս յայսմիկ շնորհօք և իմաստութեամբ, և զգեցո՛ զմեզ զինու առաքինութեան զամենայն ժամանակս կենաց մերոց՝ լինել հաւատարիմ թարգմանիչս աստուածային կամաց քոց:

Զօրացո՛, Տէր, զեկեղեցի քո սուրբ, լրութեամբ ամենայն հաւատացելոց, որ ժողովեալ յայսմ պահու, միախորհուրդ և միաբան առնեն աղօթս վասն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյս և պայծառութեան Տանս, և առաւել՝ յաղագս առողջութեան կենաց Սրբազան Հայրապետին մերոյ և Գահակալին Աթոռոյս Մեծի Տանն Կիլիկիոյ Տեառն . . . . . Կաթողիկոսի, և

ցո՛յց նմա զառաւելութիւն մեծութեան քաղցրութեան քո, որպէս ցուցեր Առաքելոյն Պօղոսի, անօթ ընտրութեան առնելով զնա ի ձեռս քո, զի մեծարեալ պատուեսցի ի քէն և զու փառաւոր արասցես զնա փառօք քով ի մէջ եկեղեցւոյս և առաջի այլոց ազգաց և ազանց, արժանաւոր ծառայութեամբ կատարելով զկամս քո, ի շինութիւն ժողովրդեանդ, ի հաստատութիւն Ուխտին Կաթողիկոսական Աթոռոյս, անապատաք կենօք, առաքինի առաջնորդութեամբ, անթառամ բերկրանօք, ի փառս և ի պատիւ Ամենասուրբ Երրորդութեանդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ԵՒ ԱՍԵՆ ՓՈԽ (ՍԱՂՄՈՍ Կ. 2–7)

Լուր, Աստուած, աղօթից իմոց, և նայեաց, Տէր, յաղօթս իմ։

Ի ծագաց երկրէ կարդացի առ քեզ, մինչ ի վաստակել սրտի իմոյ։

Ի վիմէ բարձր արարեր զիս, առաջնորդեցեր ինձ, և եղեր իմ յոյս, և աշտարակ հզօր եղեր ինձ յերեսաց թշնամւոյն։

Բնակեցայց ես ի յարկս քո յաւիտեան, և ծածկեցայց ընդ հովանեաւ թևոց քոց։

Դու, Աստուած, լուար աղօթից իմոց, ետուր ժառանգութիւն՝ ոյք երկնչին յանուանէ քումմէ։

ՍԱՂՄՈՍ ՁԳ.

Ո՛րպէս սիրելի են յարկք քո, Տէր զօրութեանց։

Ցանկայ և փափաքէ անձն իմ ի գաւիթս քո. սիրտ իմ և մարմին իմ ցնծասցեն առ Աստուած կենդանի։

Երանի՛ ամենեցուն որ բնակեալ են ի տան Տեառն, յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ։

Վասն զի լաւ է ինձ մի օր ի գաւիթս քո, քան զհազարս։

Տէր Աստուած զօրութեանց, երանեալ է այր որ յուսայ ի քեզ։

ՇԱՐԱԿԱՆ ԴՁ.

Ուրախ լեր սուրբ եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պատկեաց զքեզ խաչիւն իւրով, եւ զարդարեաց զամուրս քո սքանչելի փառօքն իւրովք։

Խընդա յոյժ դուստր Սիոնի, քանզի երկիրս երկնիցք եղեն այսօր վերսին քո նորոգմամբ, եւ բազաւորն երկնաւոր հաճեցաւ բնակել ի քեզ։

Ընդ դասս երկնաւոր զօրացըն վեր առեալ տօնեմք զանդադար փառատրութիւնս, ուրախ լեր հարսն անարատ անբծին քո խորհրդով։

Ալէլուիա ալէլուիա

Քահանայք քո զգեցին զարդարութիւն եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Ընթերցուածս յԵսայեայ Մարգարէէ (ԿԱ. 1-7)։

Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս, աւետարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սրտիւք, քարոզել գերեաց զթողութիւն և կուրաց տեսանել.

Կոչել ամ Տեառն ընդունելի և օր հատուցման Աստուծոյ մերոյ, մխիթարել զամենայն սգաւորս.

Տալ սգաւորաց Սիոնի փառս. փոխանակ մոխրոյն՝ օծումն ուրախութեան, և սգաւորացն հանդերձ փառաց՝ փոխանակ ոգւոյն վհատութեան.

Եւ կոչեսցին նոքա ազգք ազգք արդարութեան, տունկ Տեառն ի փառս։

Եւ շինեսցեն զաւերակսն յաւիտենից, և զյառաջագոյն աւերեալսն կանգնեսցեն, և նորոգեսցեն զքաղաքս աւերեալս ազգաց մինչև յազգս։

Եւ եկեսցեն օտարածինք՝ հովիւք խաչանց քոց, և այլազգիք՝ մաճակալք և այգեզործք քո։

Բայց դուք՝ քահանայք Տեառն կոչեսջիք, պաշտօնեայք Աստուծոյ մերոյ անուանեսջիք, զզօրութիւն ազգաց կերիջիք, և մեծութեամբ նոցա սքանչելի լինիջիք։

Փոխանակ ամօթոյ ձերոյ կրկին ուրախութիւն, և փոխանակ անարգանաց ձերոց ցնծութիւն, և ապա զերկիրն յերկրորդում ժառանգեսցեն, և ուրախութիւն յաւիտենից ի վերայ գլխոց նոցա։

Պօղոսի Առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս (Է. 23-28):

Եւ բազում են կացեալ քահանայք վասն մահու արգել լինելոյ ի մշանջենաւորել։

Իսկ սա վասն յաւիտեան կալոյ՝ առանց անցանելոյ ունի զքահանայութիւնն.

Ուստի և կենդանի առնել համօրէն կարող է զմատուցեալսն նովաւ առ Աստուած. քանզի միշտ կենդանի է լինել բարեխօս վասն նոցա։

Զի այսպիսի իսկ և վայել էր մեզ քահանայապետ, սուրբ, անմեղ, անարատ, զատեալ ի մեղաւորաց և բարձրացեալ քան զերկինս.

Որում ոչ հանապազ հարկ է, որպէս այլոց քահանայապետիցն, նախ վասն իւրեանց մեղացն պատարագս մատուցանել և ապա վասն ժողովրդեանն. իսկ սա զայն միանգամայն կատարեաց, զի զանձն իւր մատոյց պատարագ։

Օրէնքն զմարդիկ կացուցանեն քահանայապետս, զդաժեալս տկարութեամբ, իսկ բանն երդման յետ օրէնացն՝ զՈրդի, որ յաւիտեան կատարեալ է։

Ալէլուիա ալէլուիա

Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի եւ Տէր ընդ աջմէ քումմէ։

Օրթի, եւայլն։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու (Ժ.11-16)։

Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց։

Իսկ վարձկանն որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրև տեսանէ զգայլն զի գայ, թողու զոչխարսն և փախչի. և գայլն յափշտակէ զնոսա և ցրուէ։

Քանզի վարձկան է և չէ փոյթ նմա վասն ոչխարացն։

Ես եմ հովիւն քաջ, և ճանաչեմ զիմն և ճանաչեմ յիմոցն։

Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ և ես զՀայր. և զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց։

Նաև այլ ևս ոչխարք են իմ որ ոչ են յայսմ գաւթէ, և զայնս ևս պարտ է լինել ածել այսր, և ձայնի իմում լուիցեն, և եղիցին մի հօտ և մի հովիւ։

ԿԱՐՈԶ

Եւ եւս խաղաղութեան . . . :

Տէր ողորմեա.

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ հաստատութեան սրբոյ Եկեղեցւոյ, զՏէր աղաչեսցուք:

Վասն ամենայն սուրբ եւ ուղղափառ եպիսկոպոսաց, զՏէր աղաչեսցուք:

Վասն Հայրապետին մերոյ Տեառն Սահակայ եւ Արուակցի նորին Տեառն Բարգենի Կաթողիկոսին կենաց, զՏէր աղաչեսցուք:

Վասն վարդապետաց, քահանայից, սարկաւագաց, դպրաց եւ ամենայն ուխտի մանկանց եւ սպասաւորաց Սրբոյ Եկեղեցւոյս, զՏեր աղաչեսցուք:

Վասն բարորութեան ազգիս Հայոց, զՏեր աղաչեսցուք:

Յաղագս այնոսիկ որ ի գերութեան են եւ ի չար ծառայութեան, զՏեր աղաչեսցուք:

Յաղագս բարեկարգութեան եւ հաստատութեան Հայրապետական Աթոռոյս Կիլիկիոյ, զՏեր աղաչեսցուք:

Եւ եւս միաբան: Զանձինս: Ողորմեաց:

Տեր ողորմեա, Տեր ողորմեա, Տեր ողորմեա:

Ա.Ղ.Օ.Թ.Ք

Փա՜ռք եւ գոհութիւն քեզ, Հայր երկնաւոր, որ պահեցեր զեկեղեցի քո սուրբ Հայաստանեայց յԽոպառ կործանմանէ եւ առաջնորդեցեր փոքու հօտին քում և ածեր զնա յերկիր խաղաղութեան, և չնորհեցեր նմա զեկեղեցի քո անքոյթ նաւահանգիստ ի ծովածուփ կենցաղս աշխարհիս այսորիկ, զի կեցցէ գործել զբարիս, վասն փառաց Սրբոյ Աւետարանին, հայակրօն վարուք և հայրենաւանդ սրբութեամբ և սովորութեամբք:

Գոհանամք զքէն զի ոչ թողեր զեկեղեցի հաւատացելոց Սրբոյ Աւետարանիդ ի ձեռս թշնամեաց և պաշտպանեցեր Սրբոյ Աթոռոյս, և ընդ սուր և ընդ հուր և ընդ ջուր հանեալ հասուցեր ասա յերկիր անդորր զհաւատացեալ ժողովուրդն Մայրենի Եկեղեցւոյս:

Յիշեմք զաւուրս մեր զառաջինս լցեալս օրհնութեամբ քով, յորժամ ոչ իւք կարօտեալ, վայելէաք ի բարութիւնս հայրենիս. տունք մեր և յարկք յարդարեալ, դպրոցք մեր բարեկարգ եւ կանոնաւոր, ապարակք մեր և այգեստանք արդեամբք առատացեալ, չուկայք մեր և տեղիք վաճառաց և հրապարակք առևտրոց մեծացեալ ճոխութեամբք, եկեղեցիք մեր պայծառացեալ, և հօտ քո փոքր աներկիւղ ի չարէ և ի չարեաց:

Բայց մեք այսն և նախատինք եղաք թշնամեաց Աւետարանիդ և փրկական սուրբ խաչիդ: Զի նոքա գերեցին գերեփեցին զմեզ, հալածեցին և սպանին ըզ բիւրս բիւրոց հաւատացելոց անձանց, ապականեցին զհայրատունկ այգիդ, մեռուցին զմշակսն, անժառանգ արարին զհայրենի կալուածս և զստացուածս մեր, և զրկեալ յամենայնէ այս ժողովուրդ քո սեփական և հօտն փոքրիկ ոչ կորոյս զյոյս իւր, և ոչ ուրացաւ զուխտն իւր սրբութեան:

Զայս ամենայն տեսաք մեք աչօք մերովք, և ոչ դադարեցաք օրհնել զանբաւելի և զամենազօր մեծութիւն քո, Հզօր:

Արդ աղաչեմք զքեզ ձայն արկեալ ընդ երանեալ մարգարէին Երեմեայ. Յիշեա՛ Տէր որ ինչ անցք անցին ընդ մեզ. նայեաց և տես զնախատինս մեր, զի ժառանգութիւն մեր դարձաւ յօտարութիւն և բնակութիւն մեր ի նժդեհութիւն. հալածական եղեաք և ոչ գտաք հանգիստ: Օտարք տիրեցին մեզ, և այն որ փրկէին զմեզ ի ձեռաց նոցա՝ չի՛ք ի միջի. մորթք մեր կարկամեցան, զկանայս խայտառակեցին և կուսանս պղծեցին, ընտիր ընտիրքն խողխողեցան անարգութեամբ. լքան յուրախութենէ սիրտք մեր և ի սուգ դարձան օրհնութիւնք պարուց մերոց. և անկաւ պսակն ի գլխոց մերոց. վա՜յ մեզ, վա՜յ մեզ, զի մեղաք: Եւ դու Տէր, յաւիտեան կաս, ընդէ՞ր մոռացար զմեզ:

Դարձո՛ զմեզ, Տէր, եւ դարձցուք:

Նորոգեա՛ զմեզ, Տէր, և նորոգեսցուք առաւել քան զաւուրս զառաջինս, և փառաւորեսցուք զԿեզ ընդ Որդւոյ և ընդ Սրբոյ Հոգւոյն այժմ և միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

Արդ, աղաչեմք զքեզ Տէր, արժանացո՛ զմեզ տեսանել վերսին զգործս ձեռաց մերոց, ծաղկեալ և բարգաւաճեալ և հաստատեալ:

Պայծառացո՛ զեկեղեցի քո սուրբ ընդ ամենայն ծագս աշխարհիս, պարսպեալ խաղաղութեամբ ի ներքոյ և յարտաքոյ:

Ամրացո՛ և առաւել զեկեղեցի քո Հայաստանեայց լուսաւոր հաւատովք, հաստատեալ ի վերայ հիման Առաքելոցն Թադէոսի և Բարթողիմէոսի, և բարեկարգեալ ըստ լուսագործ Լուսաւորչին մերոյ Գրիգորի վարդապետութեանն, և ըստ հոգենորոգ և լուսածընունդ ուղղութեան լուսամիտ հարցն մերոց Սահակայ և Մեսրոպայ, և այլոց ամենայն լուսերամ նահատակաց և շնորհաշունչ ուղղափառ վարդապետաց և քաջ ախոյենից Սրբոյ Եկեղեցւոյս Հայաստանեայց, և պատսպարեա՛ զնա ողորմութեամբ քով, զի մի՛ կարասցեն քակել զցանկ նորա ցիռք անապատի եւ խոզք անտառի եւ օձտել զմանկունս հայրատունկ այգւոյդ:

Աղաչեմք զքեզ, Տէր, լե՛ր զօրավիգն եւ առաջնորդ առաջնորդացն Եկեղեցւոյ քո սրբոյ, որպէս զի նմանեալ քաջի հովուին Աւետարանիդ, կարասցեն գնել զանձինս իւրեանց ի վերայ բանաւոր հօտին քո փոքու, վառեալ զինու արդարութեան, լցեալ սիրով զթութեան եւ առաւելեալ ամենայն իմաստութեամբ ի հոգեւորս եւ ի մարմնաւորս, ի սպասաւորութեան Եկեղեցւոյս:

Շնորհեա՛, Տէր, հոգի սրբութեան եւ զգաստութեան ամենայն քահանայից, վարդապետաց Եկեղեցւոյս Հայաստանեայց, զի աղդեալ յաստուածային ի ճնչոյդ, ելցեն ի լեառն սուրբ լուսաւոր խորանիդ, եւ լուսաւորեսցեն զմիտս ունկնդիր հաւատացելոց՝ զօրութեամբ բանին կենաց եւ լուսով գիտութեան, եւ զօրացուսցեն զլքեալ սիրտս եւ զկիսուցեալ ծունկս ժողովրդեան, եւ հաստատեսցեն զնոսա ի կեանս աստուածպաշտութեան եւ ի հրահանգս ուղղափառութեան Եկեղեցւոյս Հայաստանեայց:

Օգնեա՛, Տէր Աստուած մեր, եւ ժողովրդեան քում, լուսաւոր պահելով զաչս մտաց նորա, եւ փրկեա՛ զնա ի պէս պէս մոլորութեանց եւ յոլոգայթից օտարաց, որպէս զի կեցցեն հաւատովք հարցն իւրեանց հարազատաց, որով կեցին նոքա ի սկզբանէ հաստատութեան Առաքելական Եկեղեցւոյս եւ եղիցին հաւատարիմ Մայրենի Եկեղեցւոյն իւրեանց, առանց խոտորելոյ յաջ եւ յահեակ, հրապուրեալ ի խայծից եւ ի խայթից մոլորեցուցչացն:

Տէ՛ր, լցո՛ զպէտս կարեաց ժողովրդեան քո, զի մի՛ իւիք կարօտեալ իցեն այլոց օտարաց, եւ ցնծութեամբ սրտի եւ հաճութեամբ հոգւոյ սիրեսցեն զԱստուած հարցն իւրեանց, փայլեալ ամենայն վայելչութեամբք աշխարհիս, առատացեալ բոլորիւք բարութեամբք, եւ անկարօտ այլոց, ելեւելս զմիմեանս արասցեն ի բարեգործութիւնս:

Ազատեա՛, Տէր, զգերեալսն ժողովրդեան քո ի կապից տանջանաց եւ զրկանաց:

Այց արա՛ որք ի բանտս եւ ի տառապանս իցեն:

Բժշկեա՛ զհիւանդութիւնս նոցա հոգւոյ և մարմնոյ:

Առաջնորդեա՛ մոլորելոցն յուղիղ գնացից։

Իմաստնացո՛ զուսուցիչս գպրատանց մերոց։

Լցո՛ շնորհօք սուրբ հոգւոյդ զուսանողս եւ զամենայն աշակերտեալս գպրութեան եւ գիտութեան։

Պարսպեալ պահեա զգործոցս և զգրոցս Ազգիս Հայոց՝ գիտութեամբ, խոհականութեամբ, արդարութեամբ և ոգւով ճշմարտութեան։

Պահեա՛, Տէր, զԿաթողիկոսական և զՊատրիարքական աթոռս հոգևոր իշխանութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ, ի Ս. Էջմիածին, յԵրուսաղէմ և ի Կ. Պոլիս, օրհնելով զգահակալս նոցա, զի կեցցեն առողջութեամբ հոգւոյ և մարմնոյ և կատարեսցեն զպարտս պաշտաման իւրեանց։

Օրհնեա՛, Տէր, և պահպանեա զՀանրապետութիւնն Հայաստան աշխարհի, բարւոք ուղղութեամբ։

Եւս առաւել աղաչեմք զքեզ, Տէր, վասն Հայրապետին մերոյ Տեառն Սահակայ Բ. Կաթողիկոսին կենաց, որ իբրև հաւատարիմ մշակ հայրատունկ այգւոյդ, ընդ լծով կաթողիկոսական պարտեաց, բարձեալ բերէ զծանրութիւն վաստակոց պաշտաման երեսուն ամաց և զտօթն անբերելի դառնագին աւուրց ի միջի ժողովրդեան իւրում, հաղորդակից և վկայ չարչարանաց և հալածանաց նորին։

Օրհնեա՛, Հայր Ամենակալ, զՀայրապետին մերոյ Տեառն Սահակայ զաւուրս կենաց և մխիթարեա զնա ի ծերութեան իւրում, առողջութեամբ հոգւոյ և մարմնոյ, զի կեցցէ փառաւորեալ յամենեցունց, ի պատիւ անուան քո եւ ի պարծանս Աթոռոյս։

Եւ յամենայնի ուղղեա՛ զգնացս մեր ըստ հաճոյից աստուածային կամաց քոց, որպէս զի բաւական լի-

ցուք կատարել զկամս քո սուրբ եւ առնել զոր ինչ պարտն է, ըստ առակի. անպիտան ծառայիցն, վասն բարեկարգութեան, չինութեան եւ հաստատութեան Աթոռոյս, օրհնելով զքեզ, եւ փառաւորելով զամենասուրբ տէրութիւն Հօրդ ամենակալի եւ Որդւոյն Միածնի եւ Սրբոյ Հոգւոյն. Ամէն։

ՇԱՐԱԿԱՆ ԴԿ.

Էջ Միածինն ի Հօրէ
Եւ լոյս փառաց ընդ նմա.
Զայնք հրնչեցին
Սանդարամետ անդրնդոց։

Տեսեալ ըզլոյս մեծ
Հայրապետին Գրիգորի.
Պատմեր ցընծութեամբ
Հաւատացեալ արքայի։

Եկայք շինեսցուք
Սուրբ ըզխորանն լուսոյ.
Քանզի ի՝ սմա ծագեաց մեզ լոյս
Ի Հայաստան աշխարհի։

Փոխ (Սղմ. ԿԶ.) Աստուած, ողորմեա մեզ և օրհնեա զմեզ, երևեցո զերեսս քո ի մեզ և ողորմեա մեզ։

Ճանաչել յերկրի զճանապարհս քո, յազգինս ամենայն ըզփրկութիւնս քո։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք, Աստուած, խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ամենայն։

Ուրախ եղիցին և ցնծասցին ազգինք, զի դու դատիս ըզ ժողովուրդս յուղղութիւն, և ազգաց երկրի դու առաջնորդես։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք, Աստուած, գոհասցին զքէն ժողովուրդք ամենայն։

Երկիր ետ զպտուղ իւր, և օրհնեաց զմեզ Աստուած, Աստուած մեր։

Աստուած մեր օրհնեսցէ զմեզ, և ի նմանէ երկիցեն ամենայն ծագք երկրի։

Պօղոսի Առաքելոյն ի Կորնթացւոց Առաջին թղթոյն է ընթերցուածն. (ԺԲ. 4-11)

Թէպէտ եւ բաժինք շնորհաց են, այլ Հոգի նոյն է։

Եթէ բաժինք պաշտամանց են, այլ Տէր նոյն է։

Եթէ բաժինք յաջողութեանց են, այլ Աստուած նոյն է որ յաջողէ զամենայն յամենայնի։

Բայց իւրաքանչիւր ումեք տուեալ է յայտնութիւն Հոգւոյն առ իւրաքանչիւր օգուտ.

Ումեմն ի Հոգւոյն տուեալ է բան իմաստութեան.

Այլում՝ բան գիտութեան ըստ նմին Հոգւոյ.

Միւսումն հաւատք՝ նովին Հոգւով.

Այլում՝ յաջողութիւն զօրութեանց.

Այլում՝ մարգարէութիւն.

Այլում՝ ընտրութիւն հոգւոց.

Այլում՝ ազգք լեզուաց։

Այլ զայս ամենայն յաջողէ միեւնոյն Հոգի, եւ բաժանէ իւրաքանչիւր որպէս եւ կամի։

Ալէլուիա ալէլուիա. (Սաղմ. ԺԷ. 33)

Աստուած, որ զգեցուցեր ինձ զօրութիւն եւ եղիր յաւիտեանս զնանապարհս իմ:

Օրթի, եւայլն:

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի (Ե. 3-16):

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Երանի՛ աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից։

Երանի՛ սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին.

Երանի՛ հեզաց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր։

Երանի՛ որ քաղցեալ եւ ծարաւի լիցեն արդարութեան, զի նոքա յագեսցին.

Երանի՛ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն.

Երանի՛ այնոցիկ, որ սուրբ են սրտիւք, զի զԱստուած տեսցեն.

Երանի՛ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին.

Երանի՛ որ հալածեալ լիցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից.

Երանի՛ է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ եւ հալածեսցեն եւ ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ.

Ցնծացէք եւ ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին։

Դուք էք աղ երկրի. ապա թէ աղն անհամի, ի՞նչ յաղիցի. ոչ իմիք ազդիցէ այնուհետեւ, բայց եթէ ընկենուլ արտաքս եւ կոխան լինել ի մարդկանէ։

Դուք էք լոյս աշխարհի.

Ոչ կարէ քաղաք թաքչել որ ի վերայ լերին կայցէ։

Եւ ոչ լուցանեն ճրագ են դնեն ընդ գրուանաւ, այլ ի վերայ աշտանակի. եւ լոյս տայ ամենեցուն որ ի տանն իցեն.

Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, եւ փառաւորեսցեն զՀայր ձեր, որ յերկինս է։

ՇԱՐԱԿԱՆ ԴՁ.

Թագաւոր փառաց Աստուած հոգիդ կենդանարար, ի շնորհաբաշխ աւուր մեծի ծնընդեան Մարիամու, դստեր Դաւթի թագաւորի, նորոգեա զկենդանութիւն մերոյ թագաւորին, զի օրհնեսցուք զքեզ տէր այժմ եւ յաւիտեան:

Ալբիւր կենաց եւ փրկութեան մերոյ հոգի հոր եւ որդւոյ, ի յարմատոյն Յեսսեայ բղխման գաւազանի հասեալ ժամու, շնորհազարդ պայծառացո զգաւազան իշխանութեան մերոյ Հայրապետին. զի օրհնեսցուք . . . :

Լրումն աշխարհի եւ հառագայթ իմանալի Հոգի Սուրբ Աստուծոյ, ի ցընծութեան աւուր լրման ուրախութեան Յովակիմայ եւ Աննայի, ալօթիւք սոցա լցո զպէտս կարեաց Հայաստանեայց Եկեղեցւոյ. զի օրհնեսցուք . . . :

(Պարտ է աստանօր հակիրճ եւ յստակ բանիւք խօսել զաւուրն պատճառութենէ եւ զԱթոռոյն եւ զԱթոռակալէն, եւ յորդորել զհաւատացեալս սիրել զՄայրենի Եկեղեցին իւրեանց եւ հաւատարմութեամբ ծառայել եւ պահել զգանձն հայրենի:)

Սուրբ խաչիւս.

Պահպանիչ.

Դպիրք ասեն.

Թագաւոր երկնաւոր զեկեղեցի քո անշարժ պահեա, եւ զերկրպագուս անուանդ քում, պահեա՛ ի խաղաղութեան:

Օրհնեալք եղերուք։

ՎԵՐՋ.

ՀՍՍՌ Գրադարան
Гос. Библиотека
ZUUՌ-Арм ССР
им. А. Мр...
Ա. ՀՍՍՌ ...

ՀՀ Ազգային գրադարան
NL0166026



Printed in Antilyas (Lebanon)